«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Արփինե Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ Զրաշենի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Բովանդակություն *էջ 2*
Ներածություն *էջ 3*
Գլուխ 1 *էջ 5*
Եզրակացություններ *էջ 14*
Գրականություն *էջ 15*

Արդիականությունը: Անցյալ դարի վերջերին մեր նորանկախ երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները իրենց ազդեցությունն ունեցան հասարակության, նրա տարբեր շերտերի, առանձին անհատների արժեքային կողմնորոշումների և արժեհամակարգերի վրա: Այս պայմաններում հրատապ էր դառնում կրթական նոր քաղաքականության կիրառման, կրթության բովանդակության մեջ արժեքների լիարժեք ներառման, ավտորիտար համակարգերին հատուկ՝ գիտելիքի տիրապետմանն ուղղված ուսուցումը արժեքների ձևավորմանը միտված կրթությամբ լրացնելու խնդիրը:

Արժեքների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում բարոյական արժեքները, որոնք ընկած են անձնային և հասարակական փոխհարաբերությունների հիմքում: Բարոյական արժեքների ձևավորման և, ընդհանրապես, բարոյական դաստիարակության հիմնահարցը տարբեր ժամանակներում գտնվել է փիլիսոփաների, մանկավարժների կրթության կազմակերպմամբ զբաղվող գործիչների ուշադրության կենտրոնում:

Մեր երկրի հանրակրթական միջին դպրոցներում բարոյագիտության վերաբերյալ նյութերը այնքան այնքան տեղ չեն զբաղեցնում, որոշ նյութեր առկա են միայն 8-րդ դասարանի <<Հասարակագիտություն>> ուսումնական առարկայի առանձին բաժնում: Սակայն հանրակրթական դպրոցի սովորողների բարոյական արժեքների ձևավորումը պետք է իրականացնել ավելի ցածր դասարաններից, ընդգրկել ուսումնական տարբեր առարկաներում:

<<Ֆիզիկան>> հանրակրթական դպրոցի առարկայական բնագավառների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: Ուստի, ֆիզիկայի դասավանդման միջոցով սովորողների բարոյական արժեքների ձևավորումը պետք է դիտել որպես դաստիարակության կարևորագույն խնդիր:

Հաշվի առնելով առկա խնդիրները և պահանջները հրատապ է դառնում բարոյական արժեքների ձևավորման ուղղությամբ հանրակրթական միջին դպրոցի <<ֆիզիկա> առարկայի կրթական ներուժի բացահայտումը, դրանց բովանդակության մեջ բարոյական արժեքներին նվիրված նյութերի ներառումը և ուսուցումն իրականացնող ուսուցչի պատրաստումը:

Նպատակը: Միջին դպրոցում ֆիզիկական կրթության արժեբանական բաղադրիչի իրացման արդյունավետ եղանակների մշակումն է:

Խնդիրները: Ուսումնասիրել և վերլուծել կրթության արժեբանական բաղադրիչի իրացման առկա վիճակը:

Մշակել համապատասխան նյութեր, մեթոդական երաշխավորություններ ֆիզիկական կրթության արժեբանական բաղադրիչի իրացման համար:

Կատարել փորձարարական աշխատանքներ առաջարկված եղանակների արդյունավետությունը պարզելու ուղղությամբ:

Սպասելի արդյունքները:Արդյունքում կվերլուծվեն ֆիզիկական կրթության արժեբանական բաղադրիչի իրացման հնարավորությունները և կմշակվեն արդյունավետ եղանակներ, որոնք կարող են ներդրվել միջին դպրոցի ֆիզիկայի ուսուցման գործընթացում:

§1. Տեսական վերլուծություն:

Արժեք

Արժեք ասելիս հասկանում ենք լայն իմաստ՝ հարաբերություններ, կրթություն, հայրենիք, ծնող, մշակույթ, երեխա, ընտանիք և այլն: Արժեքների մեջ ինձ համար առաջնային և երկրորդային գոյություն չունի: Բարձր եմ գնահատում արժեք ստեղծող, արժեք պահպանող, արժեքներ հարգող ժողովուրդներին, հասարակությանը և անհատին:

Ցավոք, այսօր ապրում ենք մի ժամանակաշրջանում, որտեղ արժեք ասված մեծ իմաստը և գաղափարը մեր հասարակության մեջ շատերն հասկանում են կա՛մ բառի ուղիղ իմաստով՝ արժեքավոր, որը կարող է լինել շոշափելի, կա՛մ հաշվարկային:

Ինչ խոսք, կան նաև փոքր խումբ կազմող հասարակություն կամ անհատներ, ովքեր ունեն և գնահատում են բարձր արժեքները:

Անհատը, ընտանիքը, ժողովուրդը և ամենակարևորը՝ հայրենիքն ու մշակույթը, կարող ենք պահել, զարգացնել, և մեր տեղը ու դերը կունենանք լայն հասարակությունում: Պենք է ստեղծենք և պահպանենք լայն համամարդկային արժեքներ:

Բնականաբար արժեքների ձևավորման և դրանց պահպանման գործում կարևոր դեր ունի հանրակրթությունը՝ դպրոցը, ուսուցիչը:

Դասավանդման գործընթացում կարևոր է ոչ թե բուն դասը կամ դասի նյութը մատուցելը, այլ տվյալ նյութի մատուցման ընթացքում ընդգծել կամ ստեղծել որևէ արժեք: Իսկ դրա համար նախ պետք է ուսուցիչը լինի պատրաստված, կարևորի արժեքները, ունենա իր համար արժեքներ:

Արժեքըհամոզմունքէայնցանկալինպատակիվերաբերյալ, որըմոտիվացնումէգործողություններնծառայումէորպեսկյանքիուղղորդողսկզբունքբազմաթիվիրավի ճակներում:Արժեքներնունենենորմատիվպարտադրողականբնույթառայն, թեինչպետքէանելկամմտածել:Արժեքներնառաջարկումենչափանիշներկամչափորոշիչներհետևյ ալիհամար՝գնահատականներտալ, կարծիքներիհիմնավորում, մոտեցումներևվարվելակերպ, վարքագծի պլանավորում և այլընտրանքներ իմիջև ընտրություն, մյուսների վրա ներազդելու փորձ և սեփական «ես»-ի ներկայացում մյուսներին: Արժեքները կապակցված են հույզերին դրանք ակտիվացնելով , վերջին ներսմի ախառնվում են

զգացմունքներին։Դրանք նաև ապահովում են կառուցվածքներ, որոնց շուրջ ավելի կոնկրետ մոտեցումներ են կազմակերպված։Դրանք ներգործում են մոտեցումների վրա, և մարդկանց արժեքները գնահատելը կարող է օգնել կանխատեսել նրանց մոտեցումներն ո ւվարքը։ Մարդիկ կազմակերպում են իրենց արժեքները հիերարխիաներով՝ ըստ նրանց համեմատական կարևորության, և արժեքների համեմատական կարևորությունը հաճախ փոփոխվում է կյանքի տևողության ընթացքում։Անհատական հոգեբանական մակարդակում արժեքները ներքին սոցիալա կանկողմնորոշիչներ են կամ բարոյական համոզմունքներ, որոնց մարդիկ դիմում են որպես ի րենց գործողությունների վերջնական հիմնավորում։ Բայց և այնպես, արժեքները պարզապես անհատական գծերչեն, այլ սոցիալական համաձայնություններ այն մասին, թե ինչ նէ ճիշտ, լավ կամ ինչը պետք է «փայփայել»։Դրանք կոդեր են կամ գործողություն ըուղղորդող ընդհանուր սկզբունքներ, այլ ոչ թե հենց գործողություններ կամ կոնկրետ ստուգաթերթ եր այն մասին, թե ինչ անել և ինչպես դաանել։ Արժեքներն ընկած են որոշակի վարքագծային ընտրությունների համար պատժամիջոցների և այլ վարքագծերի համար պարգևատրումների հիմքում։ Արժեքային համակարգը ներկայացնում է, թե ինչ է ակնկալվում և ինչի հույսըկա, ինչ է պահանջվում կամ ինչն է արգելված։

§2.Արժեք հասկացությունը

Սկսած տասնիներորդ դարի երկրորդ կեսերից՝ փիլիսոփայական միտքը սկսեց հիմնավորել և ընդունել կեցության մեջ իրականի և արժեքայինի տարանջատման անհրաժեշտությունը: Արդյունքում հստակեցվեցին երկու հասկացություններ՝ ճշմարտությունը և արժեքը:

Արժեք հասկացությունը կոչված էր ցայտուն դարձնելու հումանիտար գիտելիքի յուրօրինակությունը բնագիտականի նկատմամբ. Գիտական ճշմարտության համապատասխան հասկացությունը հումանիտարում արժեքն էր:

Արժեք սահմանման հարցում ի սկզբանե միասնական կարծիք չի եղել և ներկայումս նույնպես նման սահմանումները աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ ու ոչ միասնականությամբ: Օրինակ. Ռ. Բ. Փերին (1879-1967), դասական դարձած իր սահմանման մեջ արժեք է համարում <<ցանկացած հետաքրքրության յուրաքանչյուր օբյեկտ>>:

Արժեքներն ընդհանուր համոզմունքներեն, որոնց պետք է ձգտել կյանքում։Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս, թե ինչպես գործել: Արժեքներն ավելի նեն, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ներկայացնելով, թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում։Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում՝թե՛սեփական անձի, նթե՛ այլոց գործողությունները գ նահատելու, կարծիքները, մոտեցումներն ու վարքը հիմնավորելու, այլ ընտրանքներից որևէ մեկն ընտելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար։Կարողունակությունների այլ սխեմաների ծանոթ ընթերցողները, թերևս, կզարմանան այս մոդելում որպես կարողունակության առանձին տեսակ արժեքները տեսնելով: Բայց և այնպես, պետք է հիշել, որ «կարողունակություն» եզրույթն այստեղ չի գործածվում իր առօրյա իմասով՝որպես «ունակություն» բառի հոմանիշ, այլ ավելի տեխնիկական իմաստով՝հոգեբանական ռեսուրսներ (վերաբերմունք, հմտություններևգիտելիք), որոնք հարկ է մոբիլիզացնել և գործածության մեջ դնել ժողովրդավարական և միջմշակութային իրավիճակների պահանջմունքներն ու մարտահրավերները բավարարելու համար։Արժեքներն այս տեսակի մի ռեսուրս են: Ըստ էության, կարողունակությունների մյուս սխեմաներում արժեքները հաճախ ներառված են, սակայն դրանք որպես այդպիսին որոշարկված չեն, այլ փոխարենը միաձուլված են վերաբերմունքին։Ի հակադրություն դրա՝ ներկայիս մոդելը հստակ գաղափարական տարբերակումէ տալիս արժեքների և վերաբերմունքի միջև, որտեղ առաջինը բնութագրվում է իր նորմատիվ հրահանգավորող բնույթով։Արժեքներն առանցքային նշանակություն ունեն կարողունակությունների կոնցեպտուալացման համատեքստում, որը թույ լէ տալիս լինել ժողովրդավարության մշակույթի մասնակից։Սա պայմանավորված է այնհանգամանքով, որ առանց այս կարողունակությունների հիմքում ընկած որոշակի արժեքների մասնավորեցման, դրանք չէին լինի ժողովրդավարական կարողունակություններ, այլ փոխարենը կլինեին ավելի ընդհանուր բնույթի քաղաքական կարողունակություններ, որոնք կարելի կլիներ կիրառել հանուն քաղաքական համակարգի բազմաթիվ այլ տեսակների, այդ թվում՝հակաժողովրդավարական համակարգերի։

Օրինակ՝ինչ-որ մեկը կարող է պատասխանատու, ինքնաբավ և քաղաքականապես քաջատեղյակ քաղաքացի լինել տոտալիտար դիկտատուրայի պայմաններում, եթե նրա դատողությունների, որոշումների և գործողությունների հիմքում արժեքների այլ շարք է դ րված։Այսպիսով, այս Շրջանակի մոդելում պարունակված արժեքներն ընկած են ժողովրդավարական կարողունակությունների անմիջապես «սրտում» և առանցքային

նշանակություն ունեն այդ կարողունակությունների բնութագրման համար։Ժողովրդավարության մշակույթի մասնակիցը լինելու համար վճռորոշ է արժեքների երեք խումբ, ինչպես բերված է ս տորև։

§3.Արժեքներ և կրթություն

Վերջին տարիներին ավելի մեծո ւշադրություն է դարձվում կրթությանը՝որպես Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության խթանման և պաշտպանության գործիք: Չնայած այն հանգամանքին, որ այս սկզբունքները տասնամյակներ շարունակ եղել են եվրոպական հասարակությունների ու քաղաքական համակարգերի հիմնաքարերը՝դրանք պետք է շարունակ պահպանել ու զարգացնել։Տնտեսական և քաղաքական ճգնաժամի ժամանակ է՛լավելի ակնհայտ է դառնում, որ քաղաքացիները պետք է իվիճակի և պատրաստակամ լինեն ակտիվորեն ներգրավվելու իրենց արժեքների ու սկզբունքների պաշտպանության գործին։Ժողովրդավարական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու կարողության ձեռք բերումն ուպահպանումը սկսվում է վաղ մանկության շրջանում և շարունակվում ողջ կյանքի ընթացքում։Կարողունակությունների ձեռքբերման գործընթացը դինամիկ է և երբեք չի ավարտվում։Հանգամանքները փոխվում են, և անհրաժեշտ է, որ մարդիկ զարգացնեն առկա կարողունակություններն ու ձեռք բերեն նորերը՝արձագանքելով իրենց ապրած միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին։Ուսումնական հաստատությունները կարևոր դրենունեն այս հարատև գործընթացում։Երեխաների մեծ մասը հանրային տիրույթի հետ առաջին շփումն ու առնչություն նե նունենում դպրոցում, և դպրոցը պետքէ լինի այն վայրը, որտեղից սկսվում է ժողովրդավարական կրթությունը։Մյուս ուսումնական հաստատությունները , այդ թվում՝հետագա կրթություն ապահովող հաստատություններն ու բուհերը և սպետք է ստանձնեն այս դերը՝սովորողների տարիքին ու հասունությանը համապատասխան եղանակներով։Ժողովրդավարական կրթությունը պետք է լինի անձի լիարժեք կրթության համընդգրկուն և շաղկապված տեսլականի մի մասը։Եվրոպայի խորհուրդնիր թիվ CM/Rec(2007)6 հանձնարարական ում մներկայացնում է կրթության տեսլականը, որը ներառում է չորս գլխավոր նպատակ.

- Պատրաստել աշխատաշուկային.

- Պատրաստել կյանքին՝որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացի.
- Ապահովել անձնային զարգացում.
- ձևավորել և պահպանելլ այն, առաջանցիկ գիտելիքի բազա։

Բոլոր այս չորս նպատակներն անհրաժեշտեն, որպեսզի անհատները կարողանան ապրել անկախ կյանքով և որպես ակտիվ քաղաքացի մասնակցություն ունենան ժամանակակից, արագ փոփոխվող հասարակարգերին՝բոլոր բնագավառներում։Դրանք հավասարապես արժեքավոր են և փոխլրացնում են միմյանց։Օրինակ՝աշխատունակության համար մարդկանց անհրաժեշտ կարողունակություններից շատերը, օրինակ՝վերլուծական ունակությունը, հաղորդակցման հմտություններն ու խմբում աշխատելու ընդունակությունը ևս օգնում են դարձնել նրանց ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացիներ և հիմնարար նշանակությունուն են նրանց դաստիարակության համար։ Քանի որ մշակութային, տեխնոլոգիական և ժողովրդագրական փոփոխությունները պահանջում են անընդհատ սովորելու, մտազննելու և աշխատանքում նոր մարտահրավերներին ևհ նարավորություններին համապատասխան գործելու պատրաստակամություն՝թե՛մասնավոր, և թե՛հանրային կյանքում, հետևաբար բոլոր չորս նպատակների նանհատները պետք է հետամուտ լինեն իրենց կյանքի ողջ ընթացքում։Պետական մարմինների գործառույթն է օգնել նրանց այդ հարցում՝ապահովելով ցկյանսկրթության բավարար համակարգ։Այս գործառույթը կատարելիս, կրթական մարմիններին օգնելու նպատակով Եվրոպայի խորհուրդն արդեն իսկ մշակել է մոտեցումներ և նյութեր, ինչպես նաև աջակցել անդամ պետություններում դրանց ներդրման գործընթացին։ «Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթություն» խարտիան (EDC/HRE) սահմանում է առանցքային գաղափարական հիմունքները, նպատակները, խնդիրներն ու EDC/HRE-իկիրառման բնագավառները։ Խարտիան ժողովրդավարական քաղաքացիության կրթությունը սահմանում է որպես՝կրթություն, վերապատրաստում, իրազեկվածության բարձրացում, տեղեկատվություն, աշխատակարգեր/փորձեր և միջոցառումներ, որոնց նպատակն է ուսումնառուներին տալ գիտելիք, հմտություններ և ընկալում՝զարգացնելով նրանց վերաբերմունքն ու վարքագիծը, որպես զիվերջիններս իրաց նենուպաշտպանեն իրենց ժողովրդավարական իրավունքներն ու պարտականությունները հասարակության մեջ, արժևորեն բազմակարծությունն ու բազմազանությունը և ակտիվ մասնակցություն ունենան ժողովրդավարական կյանքում՝ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունը խթանելու և պաշտպանելու նպատակով։Խարտիայով մարդու իրավունքների կրթությունը սահմանված է որպես՝կրթություն, վերապատրաստում, իրազեկության

բարձրացում, տեղեկատվություն, աշխատակարգերփորձերևմիջոցառումներ, որոնց նպատակն է ուսումնառուներին տալ գիտելիք, հմտություններ և ընկալում՝զարգացնել նրանց վերաբերմունքն ուվարքագիծը, որպես զինրանք իրենց նպաստը բերեն հասարակության մեջ մարդու իրավունքների համամարդկային մշակույթի ձևավորմանն ու պահպանմանը՝մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանման ու պաշտպանության նպատակով:

Ինչպիսի՞հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը:Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որն բանցտալիս ենք այսօր:Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման հարցում և ա րտացոլում է աշխարհիայն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար:Կրթական չափորոշչի և ծրագրերի մոտեցումները

Կրթականծրագրերի/ուսումնական պլանների մշակման տարբեր մոտեցումներ կան, որոնցից երեք ըկարելի է գտնել եվրոպական երկրներում. Դրանք են՝գիտելիքահեն կրթական ծրագիրը, ուսուցման նպատակների վրա հիմնված ծրագիրը և կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթական ծրագիրը: Յուրաքանչյուր մոտեցում պայմանավորում է ուսումնական ծրագրի առանցքային տարրը, իսկ ուսումնական ծրագրի մնացած բաղադրիչները բխում են այդ կենտրոնական տարրից:Կրթական ծրագիրը/ուսումնական պլանը ավանդաբար ընկալվել և կ ազմվել է որպես գիտելիքահեն ծրագիր:Այս մոտեցմամբ կարևորվում է փաստական և հայեցակարգային գիտելիքը (հռչակագրայինգիտելիքը), օր.՝մեթոդների իմացությունը, մետաճանաչողությունը և վերաբերմունքային գիտելիքը:Այստեղ առանցքային տարրը կոնկրետ ուսումնական պլանի նպատակներից ելնելով համապատասխան գիտելիքի ընտրությունն ու դասակարգումն է:Նպատակների վրա հիմնված կրթական ծրագրի/ուսումնական պլանի համաձայն՝ուսուցման նպատակները, որոնք սահմանվում են որպես սովորողների ցակնկալվող վարքագիծ, պայմանավորում և ուղղորդում են առարկայական ծրագրի ընտրությունն ու բովանդակությունը:Կրթական ծրագիրը/ուսումնական պլանն, այնուհետ, ձևակերպվում է մտադրությունների տեսքով առ այն, թե սո վորողներն ինչ պետք է սովորեն սահմանված նպատակներին հասնելու համար:Այս մոտեցման ավելի վաղ տարբերակում նպատակները ձևակերպվում են հետևյալ կերպ՝ինչ պետք է ուսուցանվի. Քիմիա առարկայի պարագայում, օրինակ՝դա գիտելիքն է կամ փորձեր կատարելու հմտությունները:Ավելի ու շայս մոտեցումը փոխվեց՝կենտրոնանալով ուսումնառության վրա, որտեղ նպատակները ձևակերպվում են հաշվի առնելով այն վարքագծերը, որ սովորողներ ըպետք է դրսևորեն:Այս ձևակերպումն, այնուհետ, կարող է փոփոխվել՝հստակ հղում կատարելով այն «կարողունակություններին», որ սովորողները

պետք է յուրացնեն, օրինակ՝ «սեփական հիպոթեզը հիմնավորելու նպատակով քիմիական փորձեր ծրագրելու և կատարելու» կարողունակությունը։Կարողունակությունների (կոմպետենցիաներ) վրա հիմնված կրթականծրագիրն, այսպիսով, նպատակների վրա հիմնված կրթական ծրագրի զարգացման դրսևորումն է։Այստեղ կրթական ծրագրի/ուսումնական պլանի կենտրոնում դրված է ուսումնառությունն ու սովորողը՝գիտակարգային կամ կոնկրետ առարկայական կարողունակությունների և /կամ միջառարկայական կարողունակությունների կիրառմամբ։ Կրթական ծրագիրն ու սումնառության պլան է, որը որպես կանոն ձևակերպված է հետևյալ կերպ՝ «ինչ են կ արողանում անել» սովորողներն ուսման ավարտին՝տվյալ առարկայական կարողունակությունների կամ մի քանի առարկաների կամ բոլոր առարկայական խմբերի կարողունակությունների մասով։Կարողունակությունների դիտարկումը՝ «ինչ է կարողանում անել սովորողը» տեսանկյունից, թույլ է տալիս կիրառել մի մոտեցում, որի առանցքը սովորողների արդյունքներն են և, այսպիսով, այն, ինչը կարող են դիտարկվել գնահատողների կողմից։Այս մոտեցման մեջ կարողունակությունները (արժեքներ, վերաբերմունքներ, հմտություններ և գիտելիք ու քննադատական ընկալում) համարվում են փոխկապակցված։Կոմպետենտ գործելու համար անձը գործի է դնում տվյալ իրավիճակին համապատասխան արժեքներ, վերաբերմունք, հմտություններ և գիտելիք ու քննադատականը նկալում, օրինակ՝որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու և լուծելու կամ այլ ընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով։Գիտելիքահեն կրթական ծրագրի պարագայում կրթական ծրագրի/ չափորոշիչների հեղինակները կարող են շեշտադրել, օրինակ՝գիտելիքը հասկանալու կարևորությունը։Այս դեպքում ուսուցիչներն իրենց հերթին շեշտադրում են արժեքների իմացությունը (հռչակագրայինգիտելիք) և աշակերտներին սովորեցնում են վերլուծել և մտազննել արժեքները, իրենք նպատակ չեն հետապնդում համոզելուս ովորողներին՝ընդունելու ցուցադրել կոնկրետ արժեքների մասով կարողունակություն։Արժեքների քննական ընկալումը ուսուցիչներին կամ սովորողներին չի պարտավորեցնում որոշակի արժեքների որդեգրում կամ մերժում։

§4.Կրթական ծրագրի կառուցվածքը

Կրթական ծրագիրն ուսումնական պլան է, որը կարելի է կազմակերպե լ ըստ առարկաների կամ առարկայախմբերի, ըստ ուսումնական բնագավառի, փոխհատվող թեմաների կամ նախագծերի, որոնցից յուրաքանչյուրի միջոցով յուրացվում են կարողունակությունները ։Այս ցուցակում ներկայացված են միայն կրթական ծրագրի/ ուսումնական պլանի կազմակերպման հիմնականեղանակները։

- Առարկաներ կամ առարկայախմբեր (գիտակարգեր). Կրթական ծրագիրը կարելի է կազմել ավանդական առարկաների համար, օրինակ՝մաթեմատիկա, լեզուներ, ֆիզիկա, պատմություն, փիլիսոփայությունն» Օրինակ՝մաթեմատիկական հմտությունները՝հաշվարկներկատարել, օրինաչափությունները նկատել, տրամաբանված հիմնավորումներ կատարելը կամ հաշվողական գործիքներ օգտագործելը, առնչվում են ԺՄԿ-ին, քանի որ դրանք պահանջում են, որ սովորողները քննական մտածողություն դրսևորեն և հաղորդեն սեփական մտքերը։
- Ուսումնական բնագավառներ. Ուսումնական բնագավառները հայեցակարգային տիրույթներեն, որոնք տարանջատված են ոչ թե ըստա ռարկայական/գիտակարգային խմբերի, այլ ուսումնառության տեսանկյունից։Ուսումնառությունն այ սպարագայում պայմանավորված է այն հարցով, թե ինչ է անհրաժեշտ յուրացնել որոշակի փորձառության համար, օրինակ՝տեսողական ընկալում, պլաստիկ թափոնների վերաբերյալ ուսուցում, բնագիտական, հասարակագիտական ուղղություններ կամ կարողունակությունների կոնկրետ խումբ կամ հմտություններ, օրինակ՝կյանքի հմտություններ։
- Միջառարկայական թեմաներ և կարողունակություններ. Միջառարկայական թեմաները կարելի է ընկալել երևույթի կամ խնդրի տեսանկյունից, օրինակ՝ «կրթություն՝հանուն ժողովրդավարության», «բնապահպանական կամ էկոլոգիական կրթություն» և «խաղաղության ուսուցանում»։Երևույթների վրա հիմնված կամ խնդրի վրա հիմնված ուսումնառության պարագայում ուսուցումն ու ուսումնառությունը դիտվու մէ որպես մեկ ամբողջություն՝ելնելովի րական աշխարհի երևույթներից և խնդիրներից։Ելակետը սովորողին հետաքրքրող հարցեր տալն ու խնդիրներ առաջադրելն է։Այնուհետ, կրթական ծրագիրը կազմվում է այս օրինակ երևույթների կամ հարցերի հիման վրա, օրինակ՝ «միգրացիա» կամ «ջրի և պարենի մատակարարում», և տարբեր առարկաները ինտեգրվում են տվյալ հարցերի շուրջ։Այս տեսակի կրթական ծրագրերի համար ամենանպատակահարմար մանկավարժական մոտեցումներ են, օրինակ՝հարցման վրա հիմնված ուսումնառությունը, հիմնախնդրային ուսումնառությունը, նախագծային ուսումնառությունը և թղթապանակների ստեղծումը։Կրթական ծրագրերը/ուսումնական պլանները կարելի է կազմակերպել նաև միջառարկայական կարողունակությունների հիման,

օրինակ՝ժողովրդավարական կարողունակություններ, հաղորդակցության կարողունակություններ, ուսանել սովորելու կարողունակություններ։Կրթական ծրագրերում/ուսումնական ծրագրերում միջառարկայական կարողունակությունները դասավանդվում են բոլոր առարկաներով կամ ուսումնական բնագավառներում և, հետևաբար, բոլորու սուցիչներիկ ողմից։ «Հիմնական կարողունակություններն» ակնկալվում է զարգացնել որպես կրթական ծրագրերում միջառարկայական կարողունակություններ, և այս պարագայում ակնկալվում է, որ կրթական ծրագիրը կհատվի առարկաների հետև կլինի կրթության բովանդակությունը դիտարկելու միջգիտակարգային եղանակ։

Կրթական ծրագրի յուրաքանչյուր տեսակ որոշ ակի հայեցակարգային տիրույթ ուսովորելու ժամանակ է նախատեսում՝այն, ինչը նպատակահարմար է համարվում կրթության որոշակի մակարդակում։Կառավարություններըև/կամ պետական մարմինները որոշում են, թե այս կրթական ծրագրերի տեսակներից ո՛րը կամ ո՛ր համադրությունն է համարվում լավագույնը՝կրթությունը համակարգելու և կազմակերպելու տեսանկյունից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժեհամակարգը մարդո ւբարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

2. Արժեքայի նհամակարգը ձևավորվում է մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածության արդյունքում:

3. Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում առարկայի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը:

4. Սովորողների արժեհամակարգի ձևավորման ճանապարհին ուսուցման լավագույն տեսակը ինտերակտիվն է:

5. Արժեքային համակարգի ձևավորման գործընթացը պետք է լինի նպատակային և կազմակերպված, երկար և շարունակական:

6. Ուսուցման ճիշտ, համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում է սովորողների արժեհամակարգի, հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորմանը:

7. Ֆիզիկայի դասընթացը ներառում է բավարար խնդիրներ, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղվում է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, շրջապատող աշխարհի նկատմամբվ երաբերմունք, համատեղ աշխատելու՝համագործակցելու կարողություններ ձևավորելու մշտատև գ ործին:

8. Դասի ընթացքում որքան շատ են արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները, այն քան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի, և,հետագայում, մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ:

Գրականություն

1.Բալայան Ա., Սաղյան Շ., Մանկավարժական էթիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան, Զանգակ-97, 2001թ, 208 էջ

2. Հ.Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և կրթական ներուժը, Էդիթ Պրինտ, Երևան, 2011

3. Բարեղամյան Մ., Արդարության և առաքինության արժեքների ձևավորումը Մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման գործընթացում, <<Մաթեմատիկական կրթություն 2>>, հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Էդիթ Պրինտ, 2014թ., էջ 15

4. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար Հատոր 1 Համատեքստ, հասկացություններ և մոդել Եվրոպայի խորհուրդ

5. Հ. Ս. Միքայելյան, Արժեք և արժեքային հարաբերություններ, Երևան 2018

6.Ա.Վ.Ենոքյան Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցման գործընթացում. 07 փտվ, 2016 թ.

7.Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, Մանկավարժ, 2005թ., 456 էջ

8. Ս. Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Երևան, Նաիրի, 2000

9. Լ. Թորգոմյան, Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Երևան, 2011

10.Յ.Ա. Կոմենսկի, Մեծ դիդակտիկա, Երևան, 1962

11. https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/64290579da31c561556895e6405ed4b2.pdf

12.https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-02/d2b559987f0d68410ff9c6b3782fec36.pdf

13. https://mediamax.am/am/column/12925/

14. https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Matematikan%20dprocum/2009%282-3%29.pdf

15.http://ysu.am/science/hy/Zaruhi-Mikaelian/type/1/show/all